

ԲԱՐԲԱԴԱՅԻՆ-ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՏԱՐԵՐԸ
ՀՐԱՆՑ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԳՈՒՐԳԻՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցին անդրադարձող հայագետներից շատերը իրավացիորեն և ցավով են նշում այն մասին, որ գրական լեզուն բարբառներից օգտվել և օգտվում է ոչ լիարժեք: Մինչդեռ բարբառային-ժողովրդախոսակցական (կամ սխալմամբ այդպիսիք համարվող) բաղմաթիվ տարրեր, որոնք աստիճանաբար մոռացության են մատնվում, ունեն ոչ միայն գրական-գեղարվեստական, այլև զուտ լեզվաբանական արժեք: Դեռևս անցյալ դարի մեծանուն քերական Ա. Այտրնյանն է նկատել, թե «ռամիկն իր պահպանողութեամբը մեծագույն գիտերու հետ կրնայ մրցիլ»¹: Եվ իրոք, միայն «մէկ անգամ գործածուած»² դառնալ բայաձևն, օրինակ, ըստ Հր. Աճառյանի նշանակում է «կծուած, խայթուած»³ և «դառնալ բայի մի նոր իմաստն է ներկայացնում (ընդգծումը մերն է—Գ. Խ.)»⁴: Սակայն լուռու խոսվածքում մինչև օրս գործածական են «Դառչես, կոներիդ միսն ուտես», «Այ դառչե՛ք դուք», «Դառչի դա, դառչի՛», «Դառչեն, շուրն ընկնեն դրանք», «Խոնչես դառել (կատաղել)», «Դառած գյաղա» և այլ անեծքներ ու հանդիմանական արտահայտություններ. առօրյա խոսքում գործածական են նաև «դառած շուն», «դառած աղվես», «դառած կատու» և այլն: Ընդգծված բոլոր բայաձևերն ունեն ժկատաղել, զայրանալ, մաղձոտել, դառնանալ» իմաստները: Որոշ բարբառներում դառած-ի փոխարեն նշված իմաստներն արտահայտվում են կատաղել բայի բարբառային տարբերակների միջոցով (կատղած, կըտղած և այլն), ընդ որում, և՛ դառնալ, և՛ կատղած բայաձևերը վկայված են միջին դարերից: Դառնալ բայաձևի՝ «կատաղել, դառնանալ» և այլ իմաստների վերաբերյալ ամենատեղին վկայությունը, թերևս, էհնան բժշկինն է: Վերջինս (ըստ Ամիր-դովլաթ Ամասիացու) գտնում է, որ դառած շան «սավտան (սև մաղձը՝ «լեղուց վազած հիւթը»⁵—Գ. Խ.) այրի և աւելնայ»⁶, և այդպիսի շունը «զով որ տեսնու, շտնայ, որ խածնէ»⁷:

Ուշադրություն դարձնելով վերը բերված դառչես, դառչե՛ք, դառչի, դառչեն, դառել, դառած բայաձևերի կազմությանը և իմաստին, դժվար չէ հզրակացնել, որ դառնալ բայաձևը ոչ թե «դառնալ բայի մի նոր իմաստն է ներկայացնում», այլ հայերենն ունի ԴԱՌԶԵԼ սոսկածանցավոր բայը, որը ծագումնաբանորեն և իմաստային առումով կապվում է՝ 1. «լեղիանալ»⁸, 2. «վշտանալ, զայրանալ,

¹ Արսեն Այտրնյան, Բնական քերականություն աշխարհարար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 222.

² Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱՐ), հ. 1, Երևան, 1971, էջ 624.

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, հ. 3, Երևան, 1977, էջ 240.

⁶ Ամիրդովլաթ Ամասիացի, Օգոստ բժշկութեան, Երևան, 1940, էջ 515.

⁷ Նույն տեղում:

⁸ ՀԱՐ, հ. 1, էջ 624.

ժանտանալ»⁹ իմաստներն ունեցող դառնաճալ բայի հետ (հմմտ. սառնաճալ և սառչել):

Ինչ խոսք, որ գրական հայերենի և բարբառների թույլ կապի «մեղավորն» առաջին հերթին մեր գրական մշակներն են, հատկապես նրանք, ովքեր, կարծես սկզբունքայնորեն, խուսափում են բարբառային-ժողովրդախոսակցական տարրերի գործածումից, որի հետևանքով, անկասկած, տուժում է այս կամ այն երկրի լեզվաոճական կողմը: Հակառակ նշվածի՝ արձակագիր Հր. Մաթևոսյանի ստեղծագործությունների¹⁰ լեզուն համեմատված է ժողովրդական բառ ու բանով, բարբառային-ժողովրդախոսակցական բազմաթիվ բառերով ու արտահայտություններով: Եվ նրա ստեղծագործություններում կրկին կյանք են առնում այնպիսի բառեր ու կառույցներ, որոնք, ճիշտ է, այսօր ունեն ժողովրդախոսակցական երանգ, սակայն վկայված են դեռևս մեր հին մատենագրությունների մեջ, ինչպես՝ աղբիս¹¹ (1, 503), մոնիր¹² (2, 331), շալակ¹³ (1, 488) և այլն: «Կուսցավ, քար վերցնելու արեց» (ձևացրեց, թև վերցնում է—Գ. Խ., 2, 314)՝ նախադասության ընդգծված տիպի բայական հարադրություն գործածել է դեռևս Բուզանդը՝ «Բայց թագաւորն Պապ ի չքմեղս լինելով շլուելոյն առնէր, իբր թէ իւր շիցէ գործեալ զայն»¹⁴: «Համագասպն իրեն տայիս է դեպի Հաղպատ» (2, 260) կառույցը գրեթե անփոփոխ կիրառվել է յոթերորդ դարում՝ «Տուֆ զձեզ ի բլուրն»¹⁵, Վաղի ժամանակ (2, 548) կապակցության վաղի բառաձևը վկայում է, որ վաղ բառն ունեցել է հոլովման լրիվ հարացույց¹⁶, Այս շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում կոնգոնական (սցեխոսոված)՝ Գ. Խ., 2, 300) բայաձևը, որի կոնգոն բաղադրիչը («խիտ, կպչուն ցեխ») լոռու խոսվածքում հանդես է գալիս որպես անկախ բառ և ունի պատկանորթի հնություն: Այն առաջացել է հին հայերենում վկայված գայռ (սցեխ, տիղմ, աղբ, փսխումք)¹⁷ բառի միջին հայերենյան գոռ¹⁸ (հմմտ. սայթ—սօթ, ճայթ—ճօթ¹⁹ և այլն) հնչյունափոխված տարբերակի կրկնությունից՝ կոն—գոռ (հմմտ. կոնկոռ, զանգաղ, ծանծաղ և այլն):

«Գրական լեզուն միայն այն ժամանակ է պահպանում իր կենդանությունը,— գրել է անցյալ դարի քերական Ստ. Պալասյանը,— երբ իր և մյուս բարբառների մեջ եղած կապը չէ խզվում»²⁰, Հր. Մաթևոսյանն այդ կապը նորոգել է նորոգում: Պատճառն այն է, որ նրա ստեղծագործություններում արծարծվող թեմատիկայի լեզվաոճական ձևավորման համար գրական հայերենի բառապաշարն ու վերջինիս օգտագործման նորմաները չափազանց նեղ են:

⁹ «Նոր բառերը Հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 597:

¹⁰ Սույն հոդվածի լեզվական նյութը քաղել ենք Հր. Մաթևոսյանի երկհատորյակից (Երևան, 1985) և «Մատերը» ժողովածուի (Երևան, 1978) «Մեսրոպ» վիպակից (այսուհետև երկհատորյակի հատորն ու էջերը կնշվեն բնագրին կից, իսկ «Մեսրոպ»-ը կտրվի Մեսր.):

¹¹ Հմմտ. ՆՀԲ, հ. 1, էջ 36:

¹² Նույն տեղում, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 296:

¹³ Վ. Առաքելյանը գտնում է, որ որոշ բառեր (այդ թվում և շալակ բառը), գրական կիրառություն ունենալով հանդերձ, պահպանում են իրենց բարբառային երանգը, քանի որ անընդմեջ կիրառվում են նաև բարբառներում (տե՛ս Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984, էջ 73):

¹⁴ Փ ա լ ա տ ո ս Բ ու զ ա ն դ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 184:

¹⁵ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Երևան, 1976, էջ 370:

¹⁶ Գրաբարում ավանդված է բառիս միայն եզակի թվի գործիական հոլովաձևը՝ վաղիլ:

¹⁷ ՀԱԲ, հ. 1, էջ 513:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Ահարոն Գրիգորյանը սխալմամբ կարծում է, թե ճօթ անել հարադրությունը հատուկ է միայն Ղարաբաղի բարբառին (տե՛ս Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957, էջ 189):

²⁰ Ստ. Պալասյան, Ընդհանուր տեսություն արեւելյան նոր գրաբար լեզվի Հայոց, թիֆլիս, 1870, էջ 4:

Մաթևոսյանն ընթերցողին է «մատուցում» գրեթե ամբողջական մի բոլորովին նոր որակ, որտեղ անբռնազրոս կերպով համադրվում են գրական և բարբառային-ժողովրդագրական տարրերը²¹։ Մա Մաթևոսյանի ստեղծագործություններն օժտում է մի յուրօրինակ ոճով, որով Մաթևոսյան-գրողը որոշակիորեն (ավելի ճիշտ՝ էականորեն) առանձնանում է մյուսներից՝ դառնալով ժողովրդական խոսքի արժեքը քաջ գիտակցող մեր օրերի Բուզանդը, ամեն մի բառի իմաստային նրբերանգներն ու չափ-կշիռը խորապես արժեքավորող Սայաթ-Նովան, Թումանյանի շեղած «գպրոցի» արժանի սանը։

Հր. Մաթևոսյանի հերոսները հիմնականում լոռու գյուղաշխարհի մարդիկ են՝ իրենց առօրյայով, ուստի այդ մարդկանց և նրանց շրջապատի տիպականացման առաջնահերթ խնդիրը Մաթևոսյանը լուծում է համապատասխան խոսքային միջավայրի ապահովումով՝ դիմելով լոռու խոսվածքի բառապաշարին։ Նրա հերոսների խոսքը հյուսիսի է ու բնական, քանի որ գրեթե միշտ ուղեկցվում է ժողովրդական խոսքին բնորոշ՝

ա) երդումներով՝ Իմ առեւ, քո առեւ (1, 24), Իմ առեւ՝ մեղք եմ (2, 36), Նրա կանաչ առեւ (2, 36), էն աստվածը (2, 373) և այլն։

բ) Անեծքներով՝ Դժոխք՝ թե չես կերել (1, 85), դեկերոց լինես (1, 23), տերտերերոց լինես (1, 23), Գրողի ծոցը՝ լիազոր չես լինում (1, 128) և այլն, որոնց մի մասի ժխտական կազմությունը խոսքին հաղորդում է հորդորական կամ հանդիմանական երանգ՝ Այ քո տունը քանդվի ոչ, քո տունը (1, 10), Այ մեռնես ոչ դու (1, 20) և այլն։

գ) Հանդիմանական խոսքերով՝ Կտրվի Ավագը (1, 69), Հայ քո տունը շինվի (1, 378), Հեռ օրենք (2, 79), Զրույ քսակացնող (1, 222), Անտեր՝ թողեք քնքնք էլի (1, 70) և այլն։

դ) Հայհույանքներով՝ Մրա մեր... (2, 67), Ասո, ես քո ծնող... (2, 256), Մա՛հ, ջիներ... (2, 287), Հա՛հա, ալալա մորդ ջորու հոներ... (2, 354), Հորդ սարսաղ քյալեն... (2, 384), Դե քո հաստ դուրսդ էլ... (2, 556), Նաեր պրանենք (2, 594) և այլն։

ե) Պատկերավոր, հնարամիտ արտահայտություններով, առածական խոսքերով և այլն՝ Մի փութ (բավականին—Գ. Ն.) քնել (1, 30), Իրա համար (սովորական—Գ. Ն.) կնիկ է (1, 378), Հայ-նայր գնացել, վայ-վայն է մնացել (1, 542), Մեկն էստեղ ձմերուկի կորիզ է կուլ տվել (2, 54), Քաղաքում իմ դեղին ոչ մի կնիկ քանի չի տա (2, 67), Շատը շատին, իշի... բանը աղբատին (2, 39), Մեծը գովի քրիֆն է (2, 304), Վանքեր ընկույզ կտրես ատամով՝ Հաղպատ կլսվի (2, 258) և այլն։

Միանգամայն ճիշտ է նկատել Վ. Առաքելյանը, թե «մեր գրական լեզվի երակային առողջ զարկերը, համն ու հոտը, կենդանի հնչերանգները, գունեղ արտահայտությունները, թեկավոր խոսքերը և այլն գալիս են բարբառներից»²²։ Հայտնի է, որ լոռու տարածքում գոյություն ունեն իրարից տարբեր բարբառախոս վայրեր²³։ Կերպարներն առավել ամբողջական ներկայացնելու և անհատականացնելու նպատակով Մաթևոսյանը չի բավարարվում տալով նրանց արտաքին ու ներքին բնութագիր-նկարագիրը։ Հարկ եղած դեպքում նա նշում է նաև իր հերոսների՝ ո՛ր բարբառախոս վայրի ներկայացուցիչ լինելու մասին, և բանահավաքի բարեխղճությունը ու արվեստագետի վարպետությամբ «արձանագրում» լոռու այս կամ այն բարբառախոս վայրի ներկայացուցչի խոսքը։ Օրինակ՝ Աղունի (Աղնան արև և Մառնի) դարպասեցի (Թումանյանի շրջան, գյուղ Քարինջ) խորթ մոր խոսքի մեջ արյուն, ընդունակ, անընդունակ բա-

²¹ Հմմտ. Վ. Համբարձումյան, Բառի հմայքն ու հնչողությունը (Երևան, 1980, № 1, էջ 84)։

²² Վ. Առաքելյան, Հայ գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցի շուրջ (Երևան-բանասիրական հանդես, 1964, № 3, էջ 150)։

²³ Մ. Առաքելյան, Լոռու խոսվածքը, Երևան, 1968, էջ 5։

ոերը համապատասխանաբար հնչում են էրուն (2, 254), ինքյունակ (2, 50),
անիերյունակ (2, 50): Մաթևոսյանի մեկ այլ հերոսուհին (սկիսո) «ծիծաղում
էր և սպառնում էր ծիծաղելով, իրենց Մարց գյուղի (Թումանյանի շրջան—Գ. Խ.):
բարբառով. «Պիւրիլ դեմ... պիւրիլ դեմ ու ասիլ դեմ, որ ֆգսնից եմ պիւրել, քեզ
կուսակցությունից հանիլ դեն» (1, 191): Ահա և «հովիտեցի»—2, 389 (Թու-
մանյանի շրջան, գյուղ Լորուտ) Սանդրո Վաթինյանի («Տաշքենդ») խոսքը՝
«Մյենա՞ծ ես, քե կաս, էս ոչխարը կորչելու՝ տունդ վերդիր եմ անելու, ի՞նչ
ես լակել վեր բեկել, ա՛ գրկված շան որդի» (2, 312), «Ուզում յե՛ս տանձին
վառել տանք, շիճեյ» (2, 414), «Ձյե՛նդ, ձյեճեճ կտրյե՛» (2, 299) և այլն:

Մաթևոսյանը կատարում է բարբառային-ժողովրդախոսակցական տարրե-
րի չափազանց տեղին և ճիշտ ընտրություն: Նրա ստեղծագործություններում
հանդիպող բարբառային-ժողովրդախոսակցական բոլոր բառերն ու արտա-
հայտությունները (մի-երկու բացառությամբ) հասկանալի, նաև հարադատ
են ընթերցողին: Ընթերցողի համար արտասովոր չէ (նույնիսկ սպասելի է),
օրինակ, հոր Մաթևոսյանի հերոսներն անձնանունների մեծագույն մասն «օգ-
տագործում» են կրճատ ձևով, ինչպես՝ Արտաշ (2, 11), Ազուն (2, 32), Արուս
(2, 32) և այլն: Ընդ որում, ավելի հաճախակի են «բաղաձայն-վերջնահանգ
ո» հնչյունակապակցությամբ կրճատված անձնանունները: Հմատ. Լեռնո (1,
301), Արատ (1, 423), Նրչո (2, 10), Համբո (2, 16), Ասո (2, 256), Փառո (2,
340) և այլն:

Նկատենք նաև, որ Մաթևոսյանի երկերում հանդիպում են նաև անձնա-
նունների հնչյունափոխված (բարբառային) տարբերակներ՝ Մանիշակ (2, 13),
Ակոփ (2, 260), Օսեփ (2, 264), Օհանես (2, 264) և այլն:

Նր. Մաթևոսյանը ժողովրդական խոսքի երանգ է ապահովում նաև Լոռու
խոսվածքին հատուկ թե՛ մենաբաղադրիչ (ան, եի, ֆ²⁴ և այլն), թե՛ բազմաբա-
ղադրիչ (անի+ֆ, եր+ֆ, ֆ+եր, ֆ+եր+եի և այլն) հոգնակներ մասնիկների
կիրառությամբ: Օրինակ՝ շեշմակեի (1, 19), աչքերեհե (1, 105), մկանուեֆ
(1, 307), կեանեիֆ (1, 490), ճաֆեր (1, 525), իծան (1, 561), աղջկերֆ (2, 523),
դրոշակեի (2, 589), բրեխեֆ (2, 594) և այլն:

Զարգացնելով Հովհ. Թումանյանի ավանդը՝ Լ. Հախվերդյանը միանգամայն
իրավացիորեն նշում է, որ էս||այս և նման զուգաձևերից «ամեն մեկն ունի
գործածության իր տեղը»²⁵: Նվ իրոք, դրանք «ոճականորեն չեն կարող իմյանց
փոխարինել»²⁶: Մաթևոսյանի ստեղծագործություններում էս, էդ, էսֆան և
այլ դերանունների առկայությունն օրինաչափ է՝ պայմանավորված դրանցում
արծարծվող թեմայով, և պատահական չէ, որ այստեղ հանդիպում են ցուցա-
կան դերանունների՝ բառասկզբում այ> է հնչյունափոխված տարբերակների
նույնիսկ լրիվ շարքեր:

էս—2, 253	էսպես—1, 471	էսքան—2, 67	էստեղ—1, 481
էդ—2, 254	էդպես—1, 492	էդքան—2, 256	էդտեղ—2, 250
էն—1, 527	էնպես—1, 463	էնքան—2, 265	էնտեղ—2, 250:

Բերված դերանունների կիրառության հիմնական ոլորտը (ի տարբերու-
թյուն այս, այդ, այսֆան և այլ դերանունների, որոնք հանդես են գալիս հեղի-
նակային խոսքում) ուղղակի խոսքն է: Հատկանշական է, որ էս, էդ և էն դե-
րանունների կրկնակի (նույնիսկ եռակի) կիրառությունը միևնույն պարզ կամ
բարդ կառույցի մեջ ավելի է խտացնում, ընդգծում ժողովրդախոսակցական

²⁴ Ք-ով բաղադրված ոչ բոլոր բառերն են արտահայտում հոգնակի թվի իմաստ, Հմատ.
Կրճի լայն տալով եկավ (1, 196), գաճֆ (գործվածք—Գ. Խ., 1, 418), բունֆ (կացնի կամ
նմանատիպ գործիքի բուժ կողմը—Գ. Խ., 1, 516), սովառուքֆ (1, 518) և այլն:

²⁵ Լ. Հախվերդյան, Զրույցներ լեզվի մասին, Երևան, 1986, էջ 46:

²⁶ Նույն տեղում:

երանգը: Օրինակ. Ասի՛ թուկը ետեկից էս ուր է գնում էս էշը (1, 36), էդ ո՞վ ես, ախշի՛, ծառից էդ ո՞վ է ընկել (2, 261), էն ճղճղոցի մեջ էն կովը մեղք է, էն խողի լափը տվեք, ա՛յ ախշի (1, 473): Նկատենք, որ Մաթևոսյանի լեզվին հատուկ է էս, էդ, էն դերանոմների ոչ ցուցական (ավելի շուտ՝ հավելադրական) կիրառությունն այն ժամանակ, երբ տվյալ առարկան, որը մատնացույց է արվում, բացակայում է՝ էս ձին ո՞ւր է, դարպասեցի (2, 253) և այլն:

Դրական ձևերի հետ մրցող նշված դերանոմներից բացի Հր. Մաթևոսյանը գործածում է նաև մի շարք այլ բառերի զուտ բարբառային հնչյունափոխված տարբերակները, ինչպես՝ երկեն (երկայն, 1, 492), վերունի (վայրենի, 2, 464), աճկառծ (1, 431), աջող (1, 27) և այլն: Այս տեսանկյունից հետաքրքրական են բարբառային մեծ քանի միավորներ, որոնք վկայում են այն մասին, որ հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում կատարված փոխառություններին բարբառներն «արձագանքել» են տարբեր կերպ՝ ըստ տվյալ բարբառի հնչյունական և լեզվաքերականական ներքին օրինաչափությունների: Խոսքը վերաբերում է ուսեբներեց կամ վերջինիս միջոցով փոխառված որոշ բառերին (կակառ, ժանդարմ, կաւայում, կոնֆետ, ինժեներ), որոնք չորսու խոսվածքում գործածվում են ճիշտ ա:նպես, ինչպես հանդիպում են Հր. Մաթևոսյանի ստեղծագործություններում՝ կակավո (1, 547), ջանդառ²⁷ (2, 283), կասառմ (2, 292), կանփետ (2, 312), ինջիներ (Մեսր., 203):

Դեռևս անցյալ դարում իրավացիորեն նշվել է, որ Արարատյան բարբառը չափազանց հարուստ է հարադիր բայերով²⁸: Հր. Մաթևոսյանի ստեղծագործություններում տեղ են գտել այնպիսի հարադիր բայեր, որոնց համարմատ (թե՛ համադիր և թե՛ հարադիր) ձևերի կիրառությունը արդի գրական հայերենում ընդունված չէ: Օրինակ՝ վրա նստեցնել (պառկած տեղից, Մեսր., 196), կկու կտրել²⁹ (1, 517), տերտերերոց լինել (2, 23), ուրագին անել (ուրագով անընդմեջ աշխատել, 2, 87), ուշունցի կապել (2, 251), աբշերոց լինել (2, 310), վերցնելու անել (2, 314), միս անել (մորթած կենդանու միսը կտրտել, 2, 386), գինգիր տալ³⁰ (վարգել, 2, 404), հարայ ընկնել (2, 407), բկաճագ տալ (2, 462), ոտն անել (կանգնեցնել, 2, 472) և այլն: Բերված հարադրություններից մի քանիսը (օրինակ՝ վրա նստեցնել, բկաճագ տալ և այլն) բարբառային կամ ժողովրդախոսակցական համարելն, անշուշտ, ճիշտ չէ, մանավանդ որ արդի գրական լեզուն չունի նշվածներին փոխարինող ոչ նկարագրական համար-ծեքները:

Մաթևոսյանի երկերում առաջին անգամ գործածված բայական հարադրություններից հատկանշական են «ձայնարկություն (կամ քնաձայնություն) + բայ» կաղապարով արտահայտվածները, ինչպես՝ հո՛ւ անել (1, 120), թո՛ւ-թո՛ւ անել (2, 349), «ի» անել (2, 394), «այեե» անել³¹ (2, 458) և այլն, որոնք չեն ստեղ-

²⁷ Զնայած Մաթևոսյանը մեկնում է ջանդառ բառը (Մեզ Զանդառ հա՛ կեմեց, այսինքն՝ ժանդարմ, 2, 283), սակայն հնարավոր է, որ ջանդառ բառը փոխառված լինի պարսկերենից janda: «զինակիր», «անձնապահ» (տե՛ս ՀԱԲ, հ. 4, Երևան, 1979, էջ 122)՝ գործածված դեռևս Սամվել Անեռու ժամանակներից (տե՛ս նույն տեղում):

²⁸ Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 210—211:

²⁹ Ունի դարձվածքի արժեք՝ «մենակ մնալ» նշանակությամբ:

³⁰ Թումանյանի ջրղանի շոճկան գյուղում գործածական է ցինգիր բառի հականիշը նույնպես՝ քենգիր («առագավաղ»): Օրինակ. քենգիր օի:

³¹ Ի դեպ, Հր. Մաթևոսյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում ձայնարկությունների և բնաձայնությունների առատությամբ, որոնց մի մասն առաջին անգամ գործածվում է հեղինակի կողմից, ինչպես՝ Մավրո՞... Մավրավո՞... կանչում է բուն (1, 23), այեե՞ (1, 478), հո՛ւլթ, հո՛ւլթ, հո՛ւլթ (1, 116), վուե՛յ (1, 521), խինչ-խինչ՝ քիթը սրբելով (2, 27), վուա՛յ (2, 51), հա՛տ (2, 346), հաաա՛ա (2, 354), ֆշու-ուա-հուլթ [տե՛ս ժողոտոս, Երևան, 1967, էջ 24 (առաջին հատորի մեջ բացակայում է)] և այլն: Հետաքրքրական է, որ որոշ ձայնարկություններ հանդես են գալիս պարագայական գործառնություն՝ Օրինակ՝ ԳՅում, է՛ (հեռվում—Գ. Խ.), ոլորվում է ալիակոյուն անհայտություններում (1, 538), Գյուղի 1500 մետր հողդ հա՛ (անընդհատ—Գ. Խ.) ջուտ ես տալիս» (1, 11):

ծելու լավագույն միջոցներից են. սրանցով հեղինակը տալիս է հերոսի (կամ հերոսների) հոգեկան այս կամ այն ապրումի լակոնիկ նկարագիրը՝ խուսափելով ավելորդ ու երկարաշունչ խոսքերից: Օրինակ՝ Փոֆր Թոստոմբ սրտենդվեց, սրտենդությունից ֆիչ էր մնում ճաֆի, ժանգոավեց ու «ի» արեց՝ ի-իիի՛ն, ֆիչ էր մնում մաղձը թափի (2, 394):

Շատ հաճախ (հերոսների խոսքն ավելի տիպական դարձնելու միտումով և որպես ապացույց լոռու խոսվածքում բայական հարադրությունների առատության) Մաթևոսյանը գրական լեզվին հատուկ համագրական կազմությամբ բայերի փոխարեն բերում է վերջիններիս բարբառային հարադրությունները: Հմմտ. տեղափոխել լլտեղփոխ անել (1, 149), ալարել||ալարը գալ (1, 28), փաթաթել||փաթ տալ (1, 79), խնչել||խի՛նչ անել (1, 456), չբանալ||չիֆ կտրել (1, 523), խխել||խուխ անել (2, 353), երգվել||երգում կայնել (2, 355) և այլն:

Հայտնի է, որ թե՛ գրական լեզվում և թե՛ բարբառներում հարադիր բայերի մեծագույն մասի անվանական բաղադրիչը բառի ուղիղ (ուղղական կամ հայցական) ձևն է: Սակայն կան նաև թեք (տրական, բացառական, գործիական) հոլովաձևերով արտահայտվող անվանական բաղադրիչներ: Վերջիններս մեծ մասամբ ունեն բարբառային-ժողովրդախոսակցական երանգ, ուստի պատահական չէ, որ դրանք բազմիցս հանդիպում են Հր. Մաթևոսյանի ստեղծագործություններում, ընդ որում, առավել հաճախադեպ են տրական հոլովաձևերով արտահայտված անվանական բաղադրիչ ունեցող հարադիր բայերը, ինչպես՝ իրաց տալ (1, 160), ֆսի տալ (1, 492), ուշունցի կապել (2, 251), մոռանալու տալ (2, 264), իրար գցել (2, 283) և այլն: Այս շարքում ոճական յուրօրինակ դրսևորում ունեն գնալ, գալ, կենալ, մնալ բայերով հարադրություններ (վաղ-ֆիչ կաց, 1, 127, գնա դասերիդ, 1, 491, թռչակիդ մնա, 1, 45, դասերիդ կաց, 1, 513, դու քո շան լափին կաց, 2, 55 և այլն), որոնցով խոսքին հաղորդվում է հանդիմանական երանգ (խոսողին հրահանգվում, հանձնարարվում. խորհուրդ է տրվում կատարել միայն նշված գործողությունը), հատկապես, երբ խոսքն արտահայտվում է հարցական հնչերանգով՝ «Ձի լինի՞, որ դու ֆու անտեր ւաղթֆին կենաս» (2, 349):

Տրականից բացի բարբառային հարադրությունների անվանական բաղադրիչները Մաթևոսյանի երկերում արտահայտված են նաև բացառական և գործիական հոլովաձևերով, ինչպես՝ հախից գալ (2, 77), նրանով անել (2, 39), օսկով անել (2, 256) և այլն:

Հր. Մաթևոսյանի բարբառային-ժողովրդախոսակցական բառապաշարի հիմնական շերտն են կազմում բայական հարադրություններից՝ ժամանակին առաջացած դարձվածքները՝ գլուխն ուտել (1, 9), արանքը ճղել (1, 149), կկու կտրել (1, 517), փիշի-փիշի անել (2, 32), իշին դնել (անպատվել, 2, 33), ևևու անել (2, 410) և այլն:

Հարկ է նշել, որ որոշ կառույցների մեջ Հր. Մաթևոսյանը միտումնավոր կերպով ներգործական իմաստն արտահայտում է կրավորական սեռի բայաձևերով, ինչպես երբեմն արվում է լոռու խոսվածքում: Օրինակ՝ «...որ տեսնեն, նախանձվեն ու սովորեն» (2, 355), «Խնդրվում եմ» (2, 278):

Հր. Մաթևոսյանի լեզվաոճական յուրահատկություններից մեկն էլ լոռու խոսվածքին հատուկ բառակրկնությունների կիրառումն է: Շրջանցելով գրական լեզվին անցած աղբիկ-մաղբիկ (1, 362), մածուն-մուծուն (2, 48) և այս տիպի կրկնությունները (չնայած, որ սրանք ևս խոսքին հաղորդում են ժողովրդախոսակցական երանգ)³², նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ միայն մաթևոսյանական գրչին հատուկ բառակրկնություններին: Այսպես, ժամանակի պատգալական իմաստ արտահայտող բառերի ու բառակապակցությունների փոխարեն Մաթևոսյանը հաճախ նախընտրում է գործողության կա-

³² Այս մասին տե՛ս Լ. Եղեկյան, Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի ուղի հարցեր, Երևան, 1986, էջ 37—41:

տարման տեղանքության (նաև բազմապատկականության) գաղափարն արտահայտել՝

ա) ստորոգյալի կրկնությամբ: Օրինակ՝ «էդպես կոնգրուակալած էլ կանգնում-կանգնում (մի որոշ ժամանակ— 9. Խ.) ու... գոմում գնում իրեն կախում է» (2, 300), «Լսեց-լսեց, ասաց...» (2, 333):

բ) Զևի պարագայի գործառնությամբ հանդես եկող անորոշ դերբայի գործիական հոլովածների կրկնությամբ: Օրինակ՝ «Սողալով-սողալով... ինքն եկավ քար դնելու ակների տակ» (2, 259), «Լողալով-լողալով բերեց գյուղի գլխին կանգնեցրեց» (2, 318), «Ժպտալով-ժպտալով եկավ վերցրեց» (2, 334), «Հարցնելով-հարցնելով հիվանդանոցը գտավ» (2, 336) և այլն:

գ) Բայական հարադրությունների անվանական բաղադրիչների կրկնությամբ: Հմմտ. նկուռ-նկուռ գնալ (1, 84), քեփոին-քեփոին անել (1, 511), ֆացի-ֆացի անել (2, 248), տրաֆ-տրաֆի դալ (2, 396), խախալ-խախալ գալ (ցրվել, Մեսր., 200), կուտալ-կուտալ գալ (Մեսր., 191) և այլն:

Չնայած կրկնվող բառերն առանձին վերցված գործածական են գրական լեզվում, սակայն դրանց կրկնությունը երկում ստեղծում է ժողովրդականացած կերպարներ: Օրինակ, երեխա-երեխա խոսել (2, 80), կույր-կույր, կույր-կույր դուրս գալ (2, 264), լանջով-լանջով, անտառով-անտառով (2, 265) և այլն:

Պատումի և հերոսների խոսքն ավելի կենդանի և դինամիկ դարձնելու միտումով գրողը երբեմն բերում է բարբառային ածանցավոր բառեր, որոնց գործածությունը գրական լեզվում բնորոշված չէ, ինչպես՝ հարմարին (1, 554), խոտորու (2, 315) և այլն: Նույն նպատակով գրական ածանցավոր բառերի փոխարեն Մաթևոսյանի ստեղծագործություններում հանդիպում են վերջիններիս բարբառային ածանցավոր համարժեքները: Օրինակ՝ գրական լեզվին հատուկ իկ, լիկ, արար, ավարի, նման ածանցների փոխարեն համապատասխանաբար գործածում է ո, լո, ավարի³³, ավար և ավուն ածանցները [հմմտ. շրլ-դո (1, 239), շեկլո (1, 533), սրանցավարի (2, 251), աղշկավարի (2, 55), ֆաղաֆավար (1, 129), շաշավուն (1, 205), ձորավուն³⁴ (1, 177) և այլն]:

Շրջապատի և կերպարների տիպականացման նպատակով Մաթևոսյանը՝ ա) հաճախ գործածում է հնաբանություններ, որոնք նույնպես (հատկապես հերոսների խոսքում) ոճական որոշակի արժեք ունեն³⁵, ինչպես՝ պատեֆուն (1, 451), բեկ (1, 562), նագան (2, 246), մաուգե (2, 248), չովսա (Մեսր., 203), խանչալ (Մեսր., 205) և այլն:

բ) Մինչև անգամ դիմում է լոռու խոսվածքում աստիճանաբար անհետացող օտարաբանություններին, ինչպես՝ ալաշա (2, 354), եսիր (2, 383), թոգոտ (2, 246), դարաշի (2, 278), սարսաղ (2, 384), ֆավթառ (Մեսր., 201) և այլն, որտեղ առանձնանում է բացառաբան (2, 278) բառը³⁶, որի միայն մեկ (աշկարա պհլ. aškarā «հայտնի») բաղադրիչն է փոխառյալ:

Հր. Մաթևոսյանի ոճական յուրահատկություններից է նաև այն, որ նա երբեմն հարկ է համարում բացատրել որևէ բառի կամ արտահայտության իմաստը: Օրինակ՝ «Թոհունդը կոտորուն է» (1, 260), շփերթ՝ շուպլ (1, 519), թե

33 Լ. Եղեկյանը ձիշտ է նկատել, թե Հր. Մաթևոսյանի ստեղծագործություններում «հատկապես կենսունակ են մակրայակերտ ռավարի» և «բար» ածանցները (տե՛ս Լ. Եղեկյան, Նշվ. աշխ., էջ 58):

34 Բառս հետաքրքրական է նաև նրանով, որ ավուն ածանցն այստեղ ավելացել է գոյականի վրա, այն դեպքում, երբ այն միշտ հանդես է գալիս ածական անունների հետ՝ ցույց տալով բաղադրական հատկանիշ (տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի բերականություն, Երևան, 1975, էջ 83):

35 Ա. Սոսիսյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982, էջ 208:

36 Հստ. Հր. Անադյանի, աշկարա բառը մեկ անգամ գործածել է Եղիշեն (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 219):

նշանակում է գիրքերվա մեջ ներհող փարախի այն կողմը, որ հովիվն ախպոր պես հովվաշան պահպանությանն է հանձնում (1, 537), փաշող էծը՝ ֆաշը (2, 323), «անի»՝ մամա, նանի է ասում (2, 334), պարանն ուսպանգ արեց, այսինքն՝ աջ ուսի վրայով ու ձախ թևի տուկով փաթաթեց կրծքին (1, 471): Ավելին՝ իր հերոսուհիներից մեկին («Տաշքենդ») «սագա հրենդո» արտահայտությունով (կարծես մի վրձնահարվածով) բնութագրելուց և այդ արտահայտությունը բացատրելուց հետո (սաղա հրենդո, այսինքն՝ որ լաց լինելու փոխարեն ծիծաղում է, 2, 337), կերպարն առավել ամբողջականացնելու միտումով ավելացնում է՝ բայց հետո էլ գնում է գործկում բողոքում (2, 337), որը ոչ մի կապ չունի սագա հրենդո արտահայտության բովանդակության հետ:

Բացի այն, որ Հր. Մաթևոսյանի ստեղծագործություններում տեղ են գրեթե մի շարք դուռ նորակաղմություններ (եղնահիստ, 1, 235, հերթավեհեր, 2, 331, հակահուշեր, 2, 380, հեփոփոփոց, 2, 522 և այլն), գրողը հաճախ փորձում է ընթերցողին «մատուցել» որոշ բարբառային բառերի՝ իր իսկ մշակած գրականացրած տարբերակները: Այլ կերպ ասած, Հր. Մաթևոսյանի որոշ նորակաղմությունների համար հիմք են ծառայել բարբառային «նախաձևերը»: Օրինակ, լոռու խոսվածքում գործածական էրէսը կակուղ, շաշամբարտ, հացփորի մշակ, տանը փաշած կամ, պարզապես, փաշովի արաղ, ժրժահաբէլ, անթրթկրվէլ բառերի ու բառակապակցությունների փոխարեն Մաթևոսյանի երկերում հանդիպում են համապատասխանաբար հետևյալ նորակաղմությունները՝ երեսթույլ (1, 163), շաշանպարտ (1, 210), բացփամակ (1, 322), նստասոր (2, 259), փորահաց մշակ (2, 280), տնափաշ օղի (2, 389), շառժահաբէլ (2, 71), անդնդվել (2, 349): Լոռում ուրուրին թալալ» (որոշ բարբառախոս վայրերում՝ «ձերա») են կոչում: Ուրուրի հավորսն արգելելու նպատակով կանչում են՝ Ո՛ւ-ալ-ալ-ալ-ալ-ալ-ալ...: Հր. Մաթևոսյանը բերում է վերջինիս «մշակված» համարժեքը՝ Ո՛ւրուրուրուրուրուր, հո՛ւյ... (1, 148), որն, ինչ խոսք, ավելի բարեհնչուն է, քան բարբառային «նախաձևը»:

Անկասկած, Հր. Մաթևոսյանի բառամշակման փորձերը մեծ մասամբ հաջող են: Սակայն երկու դեպք կա (օվկիանոսի մեջ՝ երկու կաթիլ ջուր), երբ Մաթևոսյանը շփոթության տեղիք է տվել: Լոռու խոսվածքում գործածական կրեհաղափ կարճ ճանապարհ» բառը և աղափը կտրել «ճանապարհը փակել» դարձվածքը Մաթևոսյանի երկերում հանդիպում են կարճառափ (1, 492) և առաջը կտրել (3, 325) ձևերով: Ակնհայտ է, որ Մաթևոսյանն այստեղ շփոթել է աղափ և առաջ բարբառային ձևերը, չնկատելով, որ դրանցից առաջինը գրաբարյան աղափ բառն է, որը գրաբարում երկրորդական իմաստներից բացի ունեն «ճանապարհ» առաջնային իմաստը³⁷: Վերջինս սրբորեն պահպանվել է լոռու խոսվածքում, և նպատակահարմար էր, որ Մաթևոսյանը հիշյալ միավորները կիրառել կարճաղափ և աղափը կտրել ձևերով, որով վերահաս կորստից փրկած կլինեի աղափ բառը, կրկին անգամ հաստատելով, որ, իրո՞ք «ռամիկը շատ անգամ... ծածուկ հնութեանց աւանդապահ է»³⁸, մանավանդ եթե նկատի ունենանք, որ մեզ հասած գրական աղբյուրներում աղափ բառը «ճանապարհ» իմաստով կիրառվել է ընդամենը մեկ անգամ³⁹: Շփոթության մյուս դեպքը շատարա (սնոշոր անցքերով մաղ՝ ցորենը կալում մաղելու և չժեծված հասկերը ցորենից շոկելու համար)⁴⁰ բառի՝ աշտարա ձևով կիրառությունն է, որը հետևանք է լոռու որոշ բարբառախոս վայրերում շատարա բառի ոչ ճիշտ արտասանության (ըշտարա): Մաթևոսյանը, փաստորեն, սխալմամբ վերականգնել է բառասկզբի կարծեցյալ ա-ն, մինչդեռ իրականում լոռու որոշ բարբառախոս վայրերում (օրինակ՝ Թումանյանի շրջան, գյուղ Դսեղ) շատարա բառը

³⁷ Նույն տեղում, էջ 117:

³⁸ Ա. Այտընեան, էջվ. աշխ., էջ 70:

³⁹ ՀԱՔ, հ. 1, էջ 117:

⁴⁰ Է. Գ. Աղաջան, Արգի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1976, 1099:

ենթարկվել է այդ խոսվածքին հատուկ հնչյունափոխության (նախաշեշտ վանկի ա > ր)⁴¹ և արտասանվում է շրտաբար (հմմտ. շրտանալ, ճրտանիք և այլն):

Շատ հաճախ Հր. Մաթևոսյանը չի սահմանափակվում բարբառային այս կամ այն տարրի անընդհատ կրկնությամբ, այլ բերում է դրա մեկ այլ (բայց դարձյալ բարբառային-ժողովրդախոսակցական) համարժեքը: Հմմտ. աշխառ ելեել (2, 367) || աշխառ դուրս գալ (2, 10), իրաց գցել (2, 283) || իրաց աալ (2, 259), ձեե աեել (1, 536) || ձեե տալ (2, 259), ուշունց տալ (Մեսր., 195) || ուշունցի կապել (2, 251), Համզո (Համազասպ, 2, 259) || Համազ (2, 259), ախպերո (2, 281) || ապերո (2, 470), մեե (1, 431) || սեպ (2, 90), իծան (1, 561) || էծեր (1, 561), աշա (2, 404) || ճաշա (Մեսր., 218) և այլն: Այս կերպ հանդիպում են նաև միևնույն բարբառային-ժողովրդախոսակցական միավորի հնչյունափոխ տարբերակները, ինչպես՝ Օճանես (2, 264) || Ոճանես (1, 9), Թիֆլիս (2, 19) || Թիֆլիս (2, 335), տրտիեզ (1, 27) || տրեիկ (1, 82) և այլն, որոնցից վերջին զուգաձևի երկրորդ բաղադրիչը վկայում է հայերենում առաջնալեզվային ա հընչյունի քմայնացման (ն) մասին⁴²:

Անշուշտ, սխալ կլինեի կարծել, թե Հր. Մաթևոսյանի նպատակը իր երկերը բարբառային-ժողովրդախոսակցական տարրերով հեղեղելն է և կամ լոռու խոսվածքի իմացության միջոցով ընթերցողին զարմացնելը: Բարբառային-ժողովրդախոսակցական բազմաթիվ ձևերին (բառեր, հոլովական վերջավորություններ, հոգնակերտ մասնիկներ, շարահյուսական կառույցներ և այլն) զուգահեռ Մաթևոսյանը, որպես անհրաժեշտություն, գործածում է դրանց համապատասխան գրական համարժեքները [հմմտ. ռափռի (Մեսր., 202) || ռառափռի (Մեսր., 219), սեպ (2, 90) || տտամ (2, 338), կերամիա (2, 335) || կղմիեզ (2, 440), ճիտ (2, 285) || վիզ (2, 285), դափա (2, 298) || ֆոդտիկ (1, 23), կա ոչ (1, 25) || չկա (1, 25), փռան (1, 245, նաև՝ փռնից, 2, 387) || փռի (1, 259), Պսեղա⁴³ (1, 461) || Պսեղի (2, 27) և այլն], նայած այն բանին, թե խոսքային տվյալ իրադրության մեջ լեզվաոճական տեսանկյունից դրանցից որն է ավելի հարմար ու հնչեղ: Սխալ կլինեի մտածել նաև, թե Մաթևոսյանն անկարող է ստեղծել «մաքուր» գրական հայերենով երկեր, այդ պատճառով է հաճախակի դիմում բարբառային-ժողովրդախոսակցական տարրերին: Նախ, ասենք, որ Մաթևոսյանը երբեմն ուղղակի ստիպված է դիմելու նշված ձևերին՝ գրական լեզվում համապատասխան (կամ, ինչպես ինքը կասեր՝ ճարմարեմ) բառի կամ արտահայտության բացակայության պատճառով, երկրորդ, չպետք է մոռանալ, որ Մաթևոսյանի գրչին են պատկանում այնպիսի գործեր, որոնցում բարբառային-ժողովրդախոսակցական տարրեր գրեթե չկան. ահավասիկ «Կենդանին և մեռյալը» վիպակը՝ գրական հայերենի մի կատարյալ նմուշ:

Հրանտ Մաթևոսյանը մի հնձվոր է՝ առաջին հայացքից քմահաճ ու ինքն-

41 Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 13:

42 Մեր նպատակից դուրս է լոռու խոսվածքին հատուկ և Մաթևոսյանի երկերում հանդիպող հնչյունափոխական իրողություններին անդրադառնալը, մասնավորապես, որ այս հարցը հանգամանորեն ուսումնասիրել է Մ. Ասատրյանը (տե՛ս հեղինակի «Լոռու խոսվածքը» արժեքավոր աշխատությունը): Հարկ ենք համարում, սակայն, նշել հնչյունափոխության մի քանի յուրօրինակ փաստեր՝ առանց մանրամասն մեկնաբանությունների /ը/ > ի (Գրիշա > Գրիշ, 1, 14), /ր/ > ու (Սմբատ > Սաւմբատ, 2, 86), ո > տ (Ղևոնդ > Ղեվաճեւ, 2, 460, հմմտ. Լևոն > Լեվաճեւ), ու > օ (անուշ > աճուշ, 2, 325), ալ > ի (վրայից > վրիցը, 1, 519), ի > է (գիտություն > գիտուրենի, 2, 307):

43 Տեղանունների մեծ մասը Մաթևոսյանի երկերում հանգես են դալիս Ա արտաքին թեքմամբ՝ Հաղպատ (2, 246), Կալաբա (1, 515), Զաղպաբա (2, 392) և այլն:

իշխան, որի սբարակ, թեթև, սիրելի գերանդին զրնգացել է» (1, 485) Լոռվա բառաշխարհի տակավին ցողապատ և ազատ խոտհարքներում» (ն. տ.): Սակայն այդ հոնձն ինքնանպատակ չէ: Լոռու խոտվածքի տարրերի կիրառությունը պայմանավորված է՝ ա) Մաթևոսյանի լեզվամտածողությամբ, բ) նրա ստեղծագործությունների մեծ մասում արժարժված թեմայով և այլ հանգամանքներով:

НАРОДНО-ДИАЛЕКТНЫЕ ЭЛЕМЕНТЫ В ПРОИЗВЕДЕНИЯХ ГРАНТА МАТЕВОСЯНА

ГУРГЕН ХАЧАТРЯН

Резюме

Особенностью художественного языка талантливого армянского прозаика Г. Матевосяна является обращение к народно-диалектным элементам, которые имеют не только стилистическую, но и чисто лингвистическую ценность. Среди народно-диалектных элементов, использованных Матевосяном, встречаются такие, которые дошли до нас или совершенно неизменившимися, или же претерпевшими частичные изменения по сравнению с теми формами и значениями, которые они имели в дописьменный период или в древнеармянском языке.

Эти элементы являются отражением языкового мышления автора и, несомненно, способствуют раскрытию темы.